

05/14295-16
1112/11714/16



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն № 1076 -Ն

ք.երևան

<<13> 10 2016 թ.

«ԱՂԵՏՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 23-ի N 584-Ն որոշման 8-րդ կետի 1-ին ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 259-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրության 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել «Աղետների բժշկության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. «Աղետների բժշկության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ 10-օրյա ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետով հաստատված նոր խմբագրությամբ կանոնադրության պետական գրանցումը:
3. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Ա.Երիցյան

Sign